

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

(Նորա մանուսան տառնամեակի առիթով)

«Թէ հայրենեաց պատկառիր»,
«Դողթնի քնաբք լուի են»,
«Յերկնից թաղ գան անմահ հոգիք»,
«Հայոց քաղեր պսակել»:

Տե՛ս «Մանուկ» ցիքի էջե՛ս

Անց'ում են քսան հինգ և ուելի ձիգ տարիները՝ այն ինչ ողբացեալն Գարեգին եպ. Սրուանձտեանց, նոր սերնդի մտաւոր հանգատանն, ժամանակ առ ժամանակ իւր «Զուշանն Զաւարջանով», իւր «Գրոց Բրոցովն», իւր «Թորոս Աղբարովն» և այլ երկերովն հերկել, ակոսել և ցանելով նոցանում իւր «Մանանան», տալիել է այդ գողտրիկ տաղաչափականով՝ ապագային վերընծիւղելու յուսով:

Հանգուցելոյն բազմադիւն կենաց ընդարձակ կենսագրութիւնն անելու չաւանդութեամբ չէ իմ սկսածս այլ որպէս հայրենակցի, պատիւ և պարտք եմ համարում մի քանի յաւելեալ դժեր ևս երկրորդել և չիշել ընթերցողին: Սկսենք ուրեմն որքան կարելին է՝ դրել մեր ունեցած լիշողութիւնից:

Այն թաղ և տունը ուր 1840 թ. դեկտ. 12 ին ծնուել ու սրնուել է Գարեգին Սրուանձտեանց, մինչ ց'ներկայս էլ կոչվում է Սանդենց թաղ: Սանդենց թաղ կամ Սանդենց տունը թաղամասն է Վանայ ալգեստանեայց Աջէմ-Մուրադխանենց հռչակաւոր. թաղին: Սակ'ը, որոյ շուրջն շատ անգամ բոլորում են թաղի մամիկներ և խալիվները իրանց խորհրդաւոր մասնայներ և կսաններ պատմելու, լերկ կապուտ քարից փորուած մի կոնաձև աւազան է. յորում թաղեցիք ճենձում են իրանց ուտեստի տարեկան պաշարն, ձաւարն ու կորկոտ և այլ հնդեղէնք. գտնուելով Սրուանձտեանենց ուղիղ դռան առջև, սանդի յորջորջումից էլ նոցա տան անուընդ կոչվել է Սանդենց տուն, որոյ անդամներն և մինչ ներկայս էլ կոչվում են Սանդենց Խաչիկ, Սանդենց Յակոբ վարժապետ, Սանդենց Միքայէլ և Սիմէօն, հանգուցելոյն եղբայրները:

Այդ հռչակաւոր թաղը իւր բնական դրից երևոյթովն ուշագրաւ է. երևակայեցէ՛ք մի գուարնայի գրօսավայր, ուղղաձիգ մի պօղոտայ, որոյ միջից անընդհատ, որոտընդոտ սահում են «Սօֆի», Նին-հոր, Խամուր-քէսէն» աղբիւրների միախառնուած ջրեր, որոց առունների եզերքով տնկուած ստուերախիտ ուռենիք և բարդենիք, ամառը հովանաւորում են անցորդն արևի կիզիչ ճառագայթներից, իսկ ձմեռը տեղատարափ ձիւն ու անձրևից: Օն ուրեմն կասկած չկար որ Գարեգինը մանուկ հասակից օժտուած չ'լինէր բնութեան այդ սքանչելիներով, որոնք յետագայում պիտի ծնեցնէին նորանում բանաստեղծական, բանահիւսական այն խանդը, այն վառ իդէալն, որոց արտայայտիչները եղան իւր «Ուշանն», իւր «Գրոցն ու Քրոց» իւր «Մանանան» իւր «Թորոս Աղսարն» և ի վերջոյ իւր «Համովն ու Հոտովն»:

Հինգ եղբայր մէջ Գարեգինը ամենից յառաջադէմն է լինում: Եղիշէի նկարագրած իւր մեծ անուանակցին պէս յառաջադէմն էր տնական գործոց մէջ, լսել ծնօրաց պատուէրները, յառաջադէմ մայրենի լեզուի դպրութեան մէջ, յառաջադէմ դասընկերաց մէջ, յառաջադէմ «ս. դրոց բացատրութիւնների մէջ. յառաջադէմ քարոզների մէջ. յառաջադէմ վարագայնոց մէջ և՛ յառաջադէմ իւր կարգակից կրօնական դասուց մէջ:

«Աղէկ ճուտն 'ի ձուին, աղէկ մանուկն օրօրոցին», ասում է Վանեցու առանձն:

Գարեգին Սանդենց, մանուկ հասակից սկսել էր իւր գործնական կեանքի առաջին փորձերն անել: Դեռ ոչ մի դպրոց և կրթարանը մտնել. հօրենական այգում սաբուն եղել է իւր բեմասացութեան ամբիօն. ուր իւր ջնկած հասակակից մանուկները շուրջն հաւաքելով քարոզել է նոցա մամիքն ու պապից լսածն ու սովորածն եօթնադարիսեան դէպքերի, վիճապնեւրի, ջան-բօլաքնեւրի, խուռն խեղդեցնեւրի կիսատ պրատ հէքեաթները, խաղացել այդտեղ մանկական խաղերն և երգել վարդենիների, լէւսաղների զովասփիւռ ստուերին տակ:

Երբ դեռ 10—12 տարեկան հասակումն է լինում մեր փոքրիկ բանահիւսն, հազիւ թէ կարողանում է կարգալ Սաղմունսի ժամագիրք. ճողոպտելով զինքն Յայնկոյսների կրթարանից, մեծ եղբայր Խայատուրին հետ տալիս են կօշկակարութեան արհեստի, բայց ոչ արհեստը նրա համար տանջանքի չափ նշանակութիւն է ունենում. հազիւ մի քանի ամիս շարունակելով շուկան, կրկին մտնում է դպրոց, Գարեգին և ընկերք իւր, Նշան Զիբուանեան, Տիգրան Մ. Ամիրջանեան, որպէս սիրով կապուած մի երրորդութիւն, իրանց չափաւոր կրթութիւնն առնելով Քօյօզ մականուանեալ Մահտեսի Օհաննէս վարժապետից և մի ժամանակ էլ Սահառունի պ. Աւետիսից (այժմ

վարդապետ), ուղղակի կծիկ դնում են (փախչում են) դէպ Վարազ, ընդունվում են ժառանգ. դպրոցի առաջնակարգ սաների մէջ: ¹⁾

Վարազ, 1857—60—65 թուականներին մի մաքնիսական ձգողականութեան ուժ է եղել. և հով չէ ցանկացել մտնելու այդ լուսոյ տաճարն և հր ծնողը փախազ չէ չալտնել իւր որդիքը ընկերացնել Գարեգինի և Նշանի...: Ըմենի աչքը դէպ այդ լուսոյ և չուսոյ վառարանն էր, որտեղ բարոյակրթութեան, գիտական վերածննդութեան կեանքը եռ էր գալիս, որտեղ սրամիտ պատանիները հաւաքուած տքնում էին բնավայրի ապագայ օգտակարութեան: Սիրուն բանաստեղծական վալը ու վալրաստանին հետ, այդ մեծ մենաստանում սկսուել էր դպրոցական նոր ուղղութիւն, մտաւոր կեանքի նոր չեղաշրջումներով. սկսուել էր ազգայնական մտաւոր գործառնութիւնք, վարժարան, թանգարան, սպարան, թատրոնական ներկայացումները այդ բոլոր հմայել ու կախարթել էին վասպուրականցի և օտարերկրացի պատանիներին և երիտասարդներին. որոնցից շատերը գաղտնի թէ չալտնի սկսել էին սիրոյ մի խանդով սկըտել (վազ տալ) դէպ այդ Ասիական փոքրիկ Վենետիկին, ուր «բազումքն էին կոյեցեալք և սակաւքն եղեն ընտրեալք»:

Գարեգինը և ընկերք իւր բոլորից ընտրուած և գովումսներն էին: Հայրենեաց «Երծիւ»ը Վարազայ խալին պատուանդանի ներքեւ բացել էր իւր հովանաւորող թւերն, որ գալ առիս ոչ հանից արտաբառ: Այս նշանաբանով պատսպարում էր որրին, կարօտին և անկարօտին. նիւթական պլտքին հետ տալով նոցա և բարոյական հացն, նոր հիմք դնելով Վասպուրականի հայոց ապա յեղաշրջող մտքերի և վերանորոգումներին: Գարեգինը Արծույն ոչ միայն աշակերտ, այլ թէ ու թիկունքն է դառնում, վարագայնոց և ժառանգ. սաների ամենից սիրելի և ազնիւ ընկերն է լինում ²⁾:

Թերթատում էինք «Արծուի Վասպուրականի» 1860—62 թ. և չաջորդող համարները և ինչ էինք կարդում «փոխ-խմբագիր Գ. Սըրուանձտեանց», կարդում էինք բանասիրական և այլ չօղուածները «ձինական կեանք», «Սուրբ Սահակ Պարթև», «համով հոտով» տա

¹⁾ Երկուքն ևս յալտնի և լեզուագիտ ուսուցիչներ էին մեզ, Պ. Ն. Չիրուանեանը ներկայումս Վանայ նահանգական կառավ. թարգման է. (երկար ժամանակ էլ անգլիոյ գոնաթէներին) ունի «Աշտ» իմ ի Գարեգն և այլ աշխատութիւնք: Իսկ Տ Ամիրջանեան (հանգուցեալ 1898-ին) յալտնի գրող և հեղինակ «Առեալ պանդուխտի» և այլ նրկերի, որոյ մասին գրել եմ նոր սկսած «Վասպուրականի գրական գործիչներ» կենսագրականի մէջ:

²⁾ Սրուանձտեանցի մկրտութեան անունը Սահանէս է եղել, իւր խիստ սքաւումսեան և խոհականութեան համար «Ինկիլիզ Սահանէս» էին կանչում իրեն. նայնպէս էին կանչում նաև վարագայնիք:

ղալափականները, նույն քաղցր անունը, նույն Սրուանձտեանց և ընկերք իւր Ն. Զիրուանեան, Տ. Շմիրջանեան և Նղիշէ Մեօրովբեան յաճախ կրկնուելի անունները:

Այն Նղիշէ, յաւէտ ողբացեալ, ամիսսելի երիտասարդ, վառվռուն վարդապետ, ոսկեգրքոյկին յաւէտ քարոզ և աւետարանիչ, որն միայն իւր «Նղիշէ ի Զաւարշան մրմնջնալ շրջէր աղաւանման» երգոյն վառեց, բորբոքեց մեղ, բայց և ինքը աւելի շուտ խամրեց. դեռ կեանքի ողջ դարունն չ'տեսած կեանքի այն թարմ հասակին մէջ կենազրաւ եղաւ 'ի Բաղէշ ուր' բազում խնդրանօք հրաւիրուած էր առաջնորդական. քարոզչութեան պաշտօնի...

«Երձուոյն Վասպուրականի» փոխ-խմբագիրն իւր այդ պատասխանատու պաշտօնին մէջ, ունէր այլ և այլ կամաւոր պաշտօններ էլ Սգնական ուսուցիչ էր նորեկ վարժապետներին, թղթակցում էր Վ. Պոյաւոյ յայտնի «Մանգումէի Էֆ.քեար», «Մասխ», Տփլիսու «Մեղու», «Կուռն», և Զմիւռնոյ «Արեւելեան Մամուլ», հալ պարբերական լրագիրներին «Վարդ» ստորագրութեամբ, և վերջին ժամանակներում, «Արկարգնդին» մէջ ունէր բազմաթիւ հաւաքածոյք:

Սրբ դեռ մանուկ պատանի հասակից բնութիւնը ինքն է եղել Սրուանձտեանցի ուսուցիչը, ուրեմն կասկած չ'կար որ միջավայրն ևս, արհեստական ուսանելի ամեն մի առարկան չղկել ու ստուարացրել են նորա բնական. ձիրքն՝ կատարելագործելով և յառաջ մղելով իւր բնական ընդունակութիւնները:

Անցնում են ամիսները և տարիները, հօրենական աջուռ ստիճումն մեր տեսած փոքրիկ խմբապետ, Սանդենց Գարեգինը, այժմ չառաջագէտն է լինում բոլոր վարագայնոց մէջ, սիւնիին և չարգելին միաբանական ուխտին մէջ:

Գարեգին Սրուանձտեանց՝ 1858-ից աշակերտելով նոր Սահակին, Խրիմեան հայրիկի, իւր հոգեւոր հօր հետ «Երձուոյն Վասպուրականի», թուուցեալ հայրենասէր թեօքն (1860 թ.) աստ և սեղ ի բնագաւառս հայրենի աշխարհին, գիւղին, գիւղաքաղաքին տալով «ողջոյն հայրենեաց», «ողջոյն աւերակաց», «ողջոյն որբոց և ալքեաց» ապա հասան 'ի Վովկաս. յաշխարհն Արարատեան, ի մայրն մեր Ս. Էջմիածին, չմթռուն Գրիգորի Լուսաւորչի Վովկասում կատարելով իրանց տաւքելութեան պաշտօնն, յետ վերադարձին, ազա ի Տարօն եղաւ իրանց առժամանակեայ հանգիստն: Անդ՝ երկիրն Մամիկոնէից, «Երձուոյն» Արձուիկ մի ծնելով, որ ժամանակ ուրախ էր և Տարօնը. ուրախ եղաւ ու ցնձացաւ մշեցի հայն, զի իւր սրբատեղումն էլ, Ս. Վարդապետի հուշակաւոր վանքում, տեսնում էր դպրոց, թանգարան, մամուլ և այլն բարոյական հաստատութիւնք, որոց բոլորի դեկավար-կառավարին ու

կարգադրին էր Գարեգին Սարկաազ, այն փոքրիկ խմբագիրն, ճուտն «Վասպուրականի Արձույն»:

Այժմ, Գարեգինը փոքրիկն էր յեղբարս, փոքրիկն թէ հասակաւ թէ տարիքով, բոլոր ընկերաց մէջ, բայց իւր գործերն մեծ էին և մեծամեծներից աւելի խոհուն ու խելամուտն էր, ամենից մտացի, գգուշաւոր գործողն էր:

Գարեգինը ճարտուն «Արձուիկին» խմբագիր, ուսուցիչ, ապա վերջերում առաջնորդ բազմահայ վիճակին և վանահայր-քարոզիչ Գրլակայ հայակաւոր վանուց, բոլոր Մշեցիք Վանք Գարեգին, զմեր առաջնորդ» ասելով, պարճենկոտութեամբ քննում էին զինքը և գործերն:

Սուաջին շրջանի վերջերումն՝ Սրուանձտեանցի խելացի գործունէութեան և զրական արդեանց համբաւն, արդէն բնավայրից դուրս տարածուել էր շատ տեղեր: Կ. Պօլսում և Տփլիսում նա չալտնուել էր սրպէս գրական նոր գործիչ, մինն ժամանակի թարմ մտքի տէր գրողներից, և հանգուցեալն դեռ երիտասարդ հասակումն մտնում է կուսակրօնութեան մէջ:

1864-ին, Էրզրումի նախկին առաջնորդ (ապա պատրիարք Կ. Պօլսոյ և այժմ Նրուսաղէմի) ամենասպատիւ Տէր Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեանից ձեռնադրուելով վարդապետ, դառնում է Վան՝ իւր բնակավայրն Վանեցիք ի մեծ զարմանս տեսնում են Սանդենց փոքրիկ (կարճիկ) տղին, այժմ վարդապետական սքեմի մէջ շրջապատուած է նոր սերնդի ընտիր ներկայացուցիչներով:

Եւ մենք «Յիսուսեան» վարժարանի ղեկավարըս տեսնում էինք զինքը Ս. Սահակ եկեղեցւոյ բնումն, վարդապետական գաւազանն ի ձեռին, ի տօնի Պարթև հայրապետին: Սեղանից լսվում են մեղմիկ և հանդարտիկ խօսքեր, բայց վառող և բորբոքող խօսքեր, որոնք բղխում էին այն տողորուած սրտից ու մտքից, բղխում էին քաղցրաբաբա բերանից, աջ ու ձախ, չալսկոյս և չալնկոյս սփռելով իւր քարոզն շիտահակ հայրապետն ասեմ... Պարթև հայրապետն՝ ասեմ... հայրենի գահ ու դալխոնի հովուական գաւազանի պաշտպանն ասեմ... Ս. Գրոց անդուգական թարգմանիչն ասեմ... և այլն և այլն ամբողջ հինգերորդ դարու վերջի տխուր անցքերն յիշեցնելով և աւանդելով մեզ՝ լի ոգևորութեամբ:

Որքան ժամանակ և երբ Վանումն էր լինում Սրուանձտեանցը, մեծ հայրապետի տօնակատարութեան հանդիսադիրն ինքն էր լինում. արժանաւորապէս և փառահեղութեամբ կատարելով և ս. պատարագն: Աջսիւրի անմանուէր և հմուտ զեկավարողի չափն ու արժէքն արդէն հասկացել էին Կարնեցիք երբ 1868-ին զիմելով նորին ս. Օձուրեան Վեհ. հայրիկին, Գարեգին վարդ. Սրուանձտեանցին հրաւիրե-

ցին որպէս լիտօք տեսուչ Կարնոյ ուսումնարաններէ: Գարեգին վարդապետը, այսպէս ասած՝ Հայաստանի կենդրոնում, նոր հիմք դրեց և նոր ուղղութիւն տուեց Կարնոյ ուսումնարաններին, մտցնելով այդտեղ նոր-նոր ուսանելի առարկայից թիւն ու քանակը, լրմբագրելով նոր ծրագիր: Եւ Կարնոսումն էլ Սրուանձտեանց թողեց տնօրնաց լիշատակելի անուն, հասցնելով բաւականին ընտրովի ուսեալ երիտասարդ ուսումնականներ:

Սրուանձտեանցի քաղաքական և կրօնական գործունէութեան սահմանը հետզհետէ ընդարձակվում էր: Կ. Պօլսոյ պատրիարքարանը, ազգ. ժողովը, Վեհապետեան սրբադսնը բոլորը Գարեգինի միշտ ջատագովներ էին, նկատի ունէին հրաւիրելու զինքն պաշտօններէ:

Պօլիս, Տիգրանակերտ, յԱնի, և այլ տեղերը առաջնորդական պաշտօնները խնդրանք տրվում էին իրեն. վստահ էին նորա խնայութեան, նորա նրբին քաղաքականութեան վրայ: 1878-ին Սրուանձտեանցին Համար մի երկար ուղևորութեան միջոց տուեց. շրջել ի բնագաւառս մայրենի և տեղադրել զամենայն ամենայնի՞, պակաս արգելքները չի պիտի չարուցանէին նորա դէմ, բայց Գարեգինը այդ ազգային առաքելութիւնն կատարեց ամենայն փափկանկատութեամբ. Կ. Պօլիս խրախուսուած սրբազան պատրիարքից, անցաւ Փոքր-Հայաստան, Տիգրանակերտ, Բաղէշ և յետոյ Վան, ամեն տեղ նրբին Հայեացքով շօշափեց դաւաճացուն ու գիւղացուն ցաւերը, Ռուս-թուրքական պատերազմից չառաջ եկած այն ամեն զրկութները, և մասամբ դատարեցրեւ զաղթականութեան այն մեծ հոսանքը, որից յետոյ իւր գրեց «Համովն ու Հոտովն»:

Ինչքան որ բնագաւառների ժողովուրդ և երիտասարդութիւնն էր գրաւել ժողովրդական քարոզչին, այնքան աւելի Կ. Պօլսոյ դարգացած և թէ բարձր շրջանի ազգայինք սիրել և մեծարել էին զինքը. զի իւր «Ճուշանովն» հոտաւէտ էր դարձել իւր «Գրոց Բրոցովն» հերկել էր նոցա միտքն, իւր «Մանանայովն» ցանել էր նոցանում մայրենի երկրի սեռմն ու սեռմանն. ամենքը Գարեգինի Համար և Գարեգինը նոցա Համար. Սրուանձտեան վարդապետը գիւթել և Հմայել էր մայրաքաղաքի փափկակեաց երիտասարդութիւնն իւր չաչտնի գրագէտներով:

Պուցէ՛ դեռ շատերին չաչտնի չէ այն որ՝ Գարեգին և ընկերք իւր գրեցին ու հրատարակեցին նախ «Սրճույն» մէջ, ապա առանձին գրքովսով «Պրքերգութիւն մեծին Սահակայ Պարթևի և անկումն Արտաշէրի Սրշակունույ» որն 1868—70—72 թ. ներկայացուեցաւ նախ Վարազ և ապա Վանում:

Հայրենիք-Վան, այդ սրբազան անունը անմոռաց էր Սրուանձ.

տեսանի մաքից ու խելից և նա անձկանօք սրտի ցանկանում էր անգամ մի ևս տեսնել իւր օրօրան գեղեցիկն Վան, իւր հռչակած Սյ-գեստանն, և նա թողնելով մայրաքաղաքի վայելքն հետևեց իւր մեծ հօր, Խրիմեան Հայրիկին: Հայրիկ (Նորին Օծութիւն Ներկայ Վեհափառ) հրաժարուելով Կ. Պօլսոյ պատրիարքութիւնից 1879 թ. վիճակաւոր առաջնորդի պաշտօնով եկաւ Վան և Սրուանձտեան՝ որպէս օգնական առաջնորդի Նորին Օծութեան հետ: Հայրենեաց կարօտակէզըն այժմ գործում և քարոզում էր հայրենեաց ծոցում. տակաւին թարմ և ուլեորիչ էին իւր խօսքերն: Չէր մոռացել հայրենական տունն ու տեղ. խողովացող առուն ու առուակը. չէր մտահանել շրջատարած ուռենիք, որոնց հովանւոյն տակ լսել էր իր «Մանանայի» ապագայ նիւթերն. այն վարդապատ սաքուն, ուր շատ անգամ երգել ու գեղեցիկ էր իւր սրտի քնարովն «Աստուած իջել 'ի Հայաստան, քաջաց արիւնն հոտոտել»:

Վանում օգնական առաջնորդ դրաւել էր ժամանակի կուսակալ Զփօտրացի Հասան փաշայի և բարձր պաշտօնէից ուշադրութիւնն, որոնք միայն Գարեգինի վստահելով արտօնեցին շքաշուք հանդիսիւ ի ներկայութեան զինուորական և քաղաքական բարձր պաշտօնէից կատարել Սգգային Սահմանադրութեան 22-երորդ տարեդարձն Յայնկոյսների ձորում. — Գարեգին մուրալսէս (փոխանորդ) մէկ Հատիկ կրօնաւորն էր Վանայ նահանգին մէջ — շատ անգամ ասել էր կուսակալ և ալ տեղեւում:

Վերջին անգամն էր որ տեսաց ողբացեալն Վանայ «Սրաբ» եկեղեցւոյ թաղականութեան խորհրդարանում, երբ 1882 թուականին Թիֆլիզի Վնդհանուր ուսուցչական ժողովից վերադարձայ Վան: Առաջին խօսքը որ ասաց ինձ՝ ինչ որ մի խորհրդաւոր հարց էր — «Խարրիկմ ունիս Թիֆլիզից. այո՛, մենք Կովկասի Հայոց շատ պարտական ենք, մանաւանդ «Հրատարակչական» ընկերութեան. նոքա Հակայական քայլերով չառաջ են գնում ժամանակակից ուսումների հետ, իսկ մենք Հազիւ կրիայի քայլերով. Բնչ ունենք որ ինչով պարծենանք. բոլորը մէկ Հատիկ «Վարժապետանոց» և այն էլ, ինչպէս տեսնում էք, կուսածաղկի վայր է դարձել շնորհիւ ոմանց եսամոյսերի... Ստուգ որ ճիշտն էր նկատել Սրուանձտեան՝ «Միացեալ» ընկերութեան Վանայ «Վարժապետանոց» իւր վերջին տարին յաւ չ'անց կացրից, հետզհետէ ուսուցիչները կողմնապաշտութեան և ինտրիգների մի վայր դարձրին, արդիւնքն այն եղաւ որ 1884 թ. վերջերում, «Վարժապետանոց» իսպառ փակուեց. էլի ձեռնունայն նստան վանեցիք:

Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց իւր անհուն գրուածոց,

իւր բանաւոր թէ՛ գրաւոր քարոզների մէջ վաստակելով մի համարելի ժողովրդականութիւն, արդարեւ բարձր 'ի կշիռ էր իւր կրօնական դասակարգին մէջ: Այդ բոլորին հետ մէկ տեղ՝ նորանում կար և միևնույն ժամանակ մանկավարժական ձգտում. շատ անգամ խօսում էր մանուկների կեանքից. ապացոյցն այն է՝ որ Կ. Պօլսում նա հրատարակեց իւր «Լինթերցարան» մանուկների համար, մի գլուխու ուսանելի դասագիրք: Դորանով հասկանալի է, որ Սրուանձտեանը չէր մոռացել իւր գրական բաժնից մաս հանել նաև հայ մանուկներին:

Այդ «լինթերցարան» բացի իւր «Ալեքեանարան» բաժնից, ունէր փոքրիկ բարոյավէպիկների, աղօթքների, կրօնական պատմութիւնների մի հաւաքածու էլ: Երբ Կ. Պօլսում դեռ ոչ մի մանկավարժի համ ու նմուշն չ'կար, Սրուանձտեանը այդ անհրաժեշտ պէտքն կատարեց և մասամբ հեշտացրեց դասաւանդութեան ուղին: Ժամանակի յայտնի գրադէտները Ռէթէոս Բերբերեան, Սղիա Դէմուրջիբաշեանը ամենքը ա'յնամութեամբ էին վերաբերում դէպի այդ կրօնական յանկավարժն, որն Վարապայնոց թոգն ու պսակն էր, որ ամենից մտացի և խելամուտն էր, ամենից շքեղայեացն, կանխամտած խօսողն էր: Իւր վերջին «Համով Նոտով», երկուսն աւելին ունեցաւ իւր հեղինակութիւնն նաև լուսաւոր շրջաններում, պատիւ ունեցաւ Ս. Պետրպուրկի «Հնագիտական» ժողովին պատուաւոր անդամ նշանակուելի:

1884-ին հրաժարուելով Վասպուրականի օգնական առաջնորդութիւնից կրկին վերադարձաւ Կ. Պօլիս: Ի նշան իւր բաւոք ծառայութեանն վարձատրուեցաւ հոգեւոյս ներսէս պատրիարքից, Երկրորդ անգամ նշանակուելով Տրապիզոնի առաջնորդ 1888-ին, անտի մեկնեց Ս. Էջմիածին և հանգուցեալ Մակար կաթողիկոսից ընդունեց եպիսկոպոսութեան բարձր աստիճանը: Տրապիզոնում երկար յաւեց Սրուանձտեանի պաշտօնավարութիւնը. կանչուեցաւ կրկին ի Պօլիս, ուր յանձնեցին Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցւոյ քարոզչութիւնն և «Վենտրոնական» ուսումնարանի կրօնի ուսուցչութիւն: Երկու պաշտօնն էլ պատուաբեր և արդիւնաւոր էին նորա համար:

Երբ 1884-ին մեկնեց Վանից, կարծես թէ վերջի բարեւն էր, վերջին մնաս բարեւն, որ վշտացած եպիսկոպոսը տուեց իւր սիրեցեալ ծննդավայրին: Աւաղ, մի էր երևակայում անգամ, որ այդ առողջակացմ և դեռ գործելու ընդունակ հոգեւորականը գնում էր Կ. Պօլիս իսպառ այնտեղ մնալու... Անողոք և անգութ ժամանակ, թնջ գիտնալու էինք որ օրհասը զինքը քարշ էր տալիս Վան—Տրապիզ 'ի Բիւզանդիա, անտի Ս. Էջմիածին և դարձեալ Պօլիս, ուր անակնկալս վրայ պիտի հասնէր անբուժելի հիւանդութիւնն: Մնացեալ օրերն անցկացրեց նախ Բերայի ս. Երրորդութեան եկեղեցւոյ սենեակում,

շրջապատուած ծանօթ տպանկունքից, որտեղից փոխադրուեցաւ Կ. Փրկչի ազգ. հիւանդանոցում. աւելի ծանր, աւելի տխուր կացութիւններ: Փ գուր անցան ճարտար բժիշկների բոլոր հոգան ու հոգատարութիւնն. ի գուր այն բոլոր լանձնարարութիւններ, մասնաւորապէս Նշրգեան պատրիարքից, եղածն ինկում էր և Սրուանձտեանի վիճակն անտանելի էր:

Այն ինչ Բերաչ, ընտիր հասարակութիւնը դեռ չուէր տաճում լսել իւր սիրելի քարոզչին և «Կենտրոնական» դպրոցի սաները ունէին չուսումն էին ընդ երկար լսելու Սրուանձտեանի դասերն, գտնում էին զինքն թալկացած ընկած մահուան անկողնում: Այլ ոչ ևս էր «Զուշան Զուարշանի» անուշահոտ բուրումն. ոչ ևս էին համով չոտովի համով խօսքերն և զրուցադրութիւնը: Քրտեքան հեղինակի արևն ի մայր էր թէքո ել ազգ. հիւանդանոցումն իսպառ փակել էր իւր շրջահայեաց աչերն, այլ ևս ամենայն ինչ կատարեալն էր ցկեանս յաւիտենականս...

1892 թ. Նոյեմ. 17-ին էր որ կնքեց իւր աշխատաւոր կեանքն ամենալիքիւն անգամ հանգստանալով երբոր ողորի պ. Յարութիւնի գրկումն, որի միակ արիւնակ' ցն էր և պահապան հրեշտակն: Սրուանձտեանի թաղման - յուղարկաւորութեան հանգիւսն էլ ըստ պատուէն և արժանաւորութեան խիստ հանդիսաւոր էր: Նոյեմբերի 19-ին բարձր հոգևորականութեանց և ծանօթ ընտրովի հասարակութեան խումբ խումբ յուղարկաւորք յեցուել էին ազգ. հիւանդանոցի ներսն և շուրջ ամենքը ի մի բերան ցաւակցում էին այն մեծ կորուստին համար, ափսոսում էին Գարեգինը:

Յուղարկաւոր թափորը ակնածելի շքով հիւանդանոցից մինչև Բերաչի եկեղեցին և անդի մինչ ձիշիի գերեզմանոց. շարժւում էր ամենայն հանդարտութեամբ և կարգապահութեամբ, որոց առաջնից զնում էր ոստիկանների մի խումբ իրենց մեծերով: Բոլորք խիստ ցաւալի մի զուգադիպութիւն. այդ 1892 թուականի վերջին երկու ամսում հայ ազգը ցրկւում է իւր չորս ընտրովի գրական մեծ գործիչներից: Նոյեմբերի 4-ին նախ Խորէն Նար-Բէշ, Նոյեմբերի 17-ին Սրուանձտեան սրբազան եպիսկոպոսները. զեկու. 19 ին Գրիգոր Արծրունի և Ռաֆայել Պատկանեանը, որոնց մահը զգալի եղաւ ոչ միայն հայ ազգին համար, այլ եւրոպացի մի կարգ զիտնոց:

Սրուանձտեանց բացի իւր պարզեաւորուած Խաչ նշաններից ունէր նաև օսմանեան Գ. կարգի պատուանշան:

Բայց այդ բոլորը ոչինչ, վաղաժամ հասած մահը նշանակութիւն չունեցաւ բեղմնաւոր մշակի գրական ազգագուտ գործունէութեան վրայ: Հանգուցեալն իւր գրական-բարոյական վաստակին հետ մտածել

էր իւր նխաժական չիշատակն էլ: Իւր վեհ մտքի և խորհուրդների հետ տնտեսել և լրացել էր այն բարի գործը, կտակելով մի համեստ գումար (հազար օսմ. լիրա) իւր հայրենիքում—Վանում հաստատուե- լիք հիւանդանոցին համար և մի փոքր գումար էլ (30 օսմ. լիրա) Ոստանայ Չարահան-ս. Նշան եկեղեցւոյ որմին տակ անշքապէս թա- դում անմահ հայ դպրին, Եղիշէի գերեզմանին վրայ մի համեստ շի- րիմ կանգնեցնելու ի չիշտոա՛յ Ե. դարու անմահ նահատակներին. իսկ մնացեալ գրքերը կտակել է Վարագայ մենաստանին:

Այսպէս ահա Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց իւր ան- փառասէր համեստութեամբն տնտեսած այդ գումարովն և գրական վաստակովն իսկ օգտակար եղաւ ոչ միայն հայ հասարակութեան, իւր բնավայրի դաւակաց, այլ և իւր հարազատ եղբարցն, լաւէտ լաւեր- ժացնելով Գարեգին անունը:

Այս 1902 թ. նոյեմբեր 17 ին բոլորելով մի տասնեակն նորա հանգստեան. այսու կ'համարձակինք պատուել չիշատակն այն գործի, այն դրական մեծ վաստակաւոր գործչի, որն իւր բեղմնաւոր երկե ով անմահացեց կրկին Ջուշան-Ջաւարշանի հերոս նահատակները. տուեց մեզ «Սառունցի Դաւիթն ու Մհէր» (Միհրան) իրանց «Մհէրի դու- նով», թողեց մեզ մի շար այն թանգագին ակունքներից—քերթուած- ներից. որին ժողով դական բանահիւստանք ենք ասում:

Յիշատակն իւր օրհնութեամբ եղիցի:

Գ. Ենքմնջ